

ԱՆՍԱՐԻՆ, ՈՐՊԵՍ ՍՈՒՖԻԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ԵՎ
ՊԱՐԱԿԵՐԵՆԻ ՄԵԾ ԳԻՏԱԿ

Արդյուլահ Անսարին սուֆիզմի և իրանական գրականության ամենականամալոր ներկայացուցիչներից մեկն է: Նրա ծագման մասին տեղեկությունները բավական սակավաթիվ են: Հայտնի է միայն այն, որ նրա հայրը, որ Անսարիի կրթության և դաստիարակության գործում մեծ դեր է ունեցել, եղել է Աբու-Մանսուր Սոհամմադ Անսարին: Ըստ հասած տեղեկությունների հայրը եղել է չափազանց ազնիվ, բավարարվող և հպարտ անձնավորություն: Երիտասարդ տարիներին Աբու-Մանսուր Անսարին եղել է հերաքցի Համզեյե Օղեյբի հավատարիմներից մեկը:

Ըստ ժամանակակիցների վկայության Արդյուլահ Անսարին օժտված է եղել բնատուր տաղանդով. աստված վերջինիս շնորհել էր արտակարգ հիշողություն, 4 տարեկանից ապագա մեծ գրողը և սուֆին արդեն հաճախում էր դպրոց: Կյանքի իններորդ տարում նա այնպիսի կրթական մակարդակի էր հասել, որ ժամանակի մեծագույն վարպետներ Ղազի Աբու-Մանսուր Ազեդին և Ջառուդին ներկայացնում էր դուրանի իր գրած մեկնաբանությունները: 14 տարեկանում Անսարին արդեն ելույթ էր ունենում գրական հավաքներում: Նա անգիր գիտեր արաբ հայտնի բանաստեղծների գրած առավել քան 70.000 բեյթ: Հադիսների անգուզական վարպետ էր, ընդ որում գրելիս նա առաջնորդվում էր երեք հիմնական սկզբունքով՝ արագ գործել, արագ գրել և արագ կարդալ: Իր մեծ ուսուցիչ Խաջի էմամ Յահյա Օմարի շնորհիվ նա գերազանց տիրապետում էր Ղուրանի մեկնության արվեստին: Կյանքի ընթացքում Անսարին ճանապարհորդել է Խորասանի մի շարք քաղաքներով, և Նիշապուրում առաջին անգամ նա սերտ կապեր հաստատեց տեղի սուֆիական միաբանությունների հետ, որոնց հետ ակտիվ շփումները Անսարիին հնարավորություն տվեցին յուրացնել շեյխերի կուտակած հարուստ փորձը:

Ի թիվս մի շարք այլ երկերի Անսարին հեղինակն է «Թաբաղաթ ալ-Սուֆիե» ստեղծագործության: Ահռելի է Թաբաղաթ ալ-Սուֆիեի դերը, որպես

պարսից գրականության կոթողի, մասնավորապես նրա սուֆիական ուղղության: Սակայն մի կարևոր պահ կա, որով է՛լ ավելի է արժեվորվում Անսարիի այս ստեղծագործությունը. դա այն լեզուն է, որով գրվել է սուֆիների վարքանկարը¹: Բանն այն է, որ Աբդուլլահ Անսարին ապրել և ստեղծագործել է հեջրիի հինգերորդ դարում (11-րդ դար)² Իրանի խորասան նահանգի Չերաֆ քաղաքում, որտեղ այդ ժամանակ տարածված էր խոսակցական մի լեզու, որ մեկ այլ մեծ սուֆիի՝ Ջամիի կողմից որակվել է, որպես Չերաֆի հին լեզու: Խոսակցական այդ լեզուն, սակայն, մեզ է հասել շատ սակավաթիվ գրավոր վկայություններով, քանի որ այդ ժամանակաշրջանում խորասանում ապրող և ստեղծագործող գործիչները գրում էին դասական լեզվով: Իսկ Անսարին, ձգտելով հնարավորինս հարազատ մնալ սովորական մարդկանց, իր «Թաբաղաթ ալ-Սուֆիեն» գրել է հասարակ ժողովրդին մատչելի լեզվով՝ այն է Չերաֆի հին խոսվածքով:

Անսարիի «Թաբաղաթ ալ-Սուֆիեն» իրավամբ կարելի է համարել պարսկերենով գրված սուֆիզմի լավագույն աշխատություններից մեկը: Մյուս բոլոր ստեղծագործություններից «Թաբաղաթ ալ-Սուֆիեն» տարբերվում է նախևառաջ նրանով, որ հեղինակը նպատակ է ունեցել ուսուցանել մուրիդներին՝ փորձելով վերջիններիս հասու դարձնել սուֆիզմի մնայուն արժեքներին: Սակայն «Թաբաղաթ ալ-Սուֆիենի» թե գիտական և թե գեղարվեստական արժանիքները դրանով չեն սահմանափակվում: Օժտված լինելով փայլուն հիշողությամբ՝ Անսարին գրքում համգամանակից ներկայացրել է իր հանդիպումներն ու զրույցները ժամանակի նշանավոր շեյխերի հետ, որոնց շնորհիվ հնարավորություն է ընձեռվում անհրաժեշտ տեղեկություններ հայթայթել սուֆիզմի համապարփակ ուսումնասիրության համար: Իսկ այդ ժամանակ Չերաֆը համարվում էր սուֆիական կարևորագույն կենտրոններից: Խորասանի քաղաքները, այդ թվում Չերաֆը, Անսարիի ժամանակաշրջանում գիտության և կրթության բնագավառում ծաղկման և բարգավաճման զագաթնակետին էին հասել: Նույն ժամանակաշրջանում այնտեղ ապրել են խոշորագույն կրոնագետներ և մեկնաբաններ: Անսարիի մանկության տարիներին միայն Չերաֆում ապրում էին տասնյակ անվանի գիտնականներ, որոնց աշակերտելով, Անսարին ուսումնառության նպատակով այլ վայրեր մեկնելու կարիք չուներ: Չերաֆում

էին ապրում խոշորագույն գիտնականներ և կրոնագետներ, որոնցից շատերը դարձան Ամսարիի ուսուցիչները: Հայտնի է, որ Հերաթում Ամսարիին դասավանդել են այնպիսի գիտնականներ, ինչպիսիք էին Ղազի Մանսուր Ազեդին, Խաջի Էմամ Յահյա Օմար Շեյբանին, Աբդուլջաբար Ջարահին և ուրիշներ: Ինքը Շեյխ-օլ-եսլամն ասել է՝ «Ես 300 հոգու մոտ հաղիս եմ լսել և թելադրություն գրել»: Այն փաստը, որ Խորասանի սահմաններում միննույն ժամանակ ապրել և ստեղծագործել է 300 անվանի գիտնական, կրոնագետ և հաղիսների մեկնաբան, վկայում է այն մասին, որ գիտությունն իրոք աննախադեպ զարթոնք էր ապրում 11-րդ դարում: Գիտության առաջընթացին զուգահեռ՝ Խորասանում զարգանում էր նաև սուֆիզմը: Դրա վառ վկայությունը Մեքքայի մեծ շեյխ Աբուլհասան Սեյրվանիի հորդորն էր մուրիդներին, որպեսզի նրանք այցելեն Խորասան՝ տեսակցելու տեղի շեյխերին, քանի որ 10-11-րդ դարերում Խորասանում էին ապրում ամենահայտնի և հեղինակավոր սուֆիական շեյխերը: Սուֆիական միաբանությունները՝ խանեզահները³, թե Հերաթում, թե Նիշապուրում, և թե Խորասանի այլ քաղաքներում այնքան ստվարաթիվ էին, որ անգամ կարծիք կար, թե տեղացիները կամ սուֆի էին, կամ էլ սուֆիզմի հետևորդներ: Իսկ խանեզահները սոսկ շեյխերին ունկնդրելու վայրեր չէին, այլև դաստիարակչական կենտրոններ, որոնք պակաս դեր չէին կատարում, քան կրոնական դպրոցները: Դա է պատճառը, որ սուֆիների և հոգևորականության հակասությունները երբեմն վերածվում էին լուրջ բախումների: Հերաթը ևս զերծ չէր նման տհաճ միջադեպերից: Ամսարիի ուսուցիչներ Ջառուդին և Յահյա Օմարը ևս երիտասարդության տարիներին մեծ զրկանքներ էին կրել: Նման հարձակումներից չկարողացավ խուսափել նաև ինքը՝ Աբդուլլահ Ամսարին: Սուֆիների վրա ճնշումները կրոնական բազմաթիվ հոսանքների հետևորդների կողմից երբեմն սաստկանում էին, երբեմն թուլանում: Դա մեծապես պայմանավորված էր կառավարիչների փոփոխությամբ: Մինչև 1052թ. Հերաթը գտնվում էր Ղազնավիների տիրապետության տակ: Հիշատակենք, որ այդ ժամանակ Ամսարին 35 տարեկան էր: Դրանից հետո, ինչպես իր «Թարիխ Բեյհադի» աշխատության մեջ վկայում է Բեյհադին, Հերաթն անցավ սելջուկների ձեռքը: Սելջուկների օրոք կրոնական հակասությունները չդադարեցին: Սելջուկյան կառավարող խմբավորումների փոփոխմանը համընթաց փոխվում

էր վերաբերմունքը նաև սուֆիների նկատմամբ: Այսպես, Ամիդ-ուլ-Մուլքի կառավարման տարիներին Անսարին ապահով էր և նրա ընդդիմախոսներին չէր հաջողվում դավադրություններ կազմակերպել: Մինչդեռ վիճակն արմատապես փոխվեց Նիզամ-ուլ-Մուլքի իշխանության օրոք, երբ Անսարիի ռիսերին թշնամիները կրկին գլուխ բարձրացրեցին ձեռնամուխ լինելով նոր սադրանքների:

Նա ուներ բազում ընդդիմախոսներ, որն ըստ էության նորմալ բան էր գրական և հոգևոր կյանքում մեծ հեղինակություն վայելող մարդու համար: Լավ ծրագրավորված դավադրությունները երբեմն ավարտվում էին Անսարիի աքսորով, իսկ հաճախ նաև գրական հավաքներում ելույթներից զրկելով: Նրա ժամանակակից Իբն Թահերը ուշագրավ մեջբերում է անում Անսարիից՝ «Հինգ անգամ ինձ ցանկացել են սրին հանձնել: Ինձ չէին ասում, որ պետք է հրաժարվեմ իմ կրոնից, պարզապես ցանկանում էին, որպեսզի ես հաշտվեմ հակառակորդներիս հետ և լռեմ, բան որին ես երբեք չէի կարող համաձայնվել»:

Վերադառնալով «Թաբադաթ ալ-Սուֆիե» ստեղծագործությանը, նշենք, որ մեզ հասել է ԹՍ ձեռագրի հինգ, ծագումով և անգամ ժամանակագրորեն իրարից տարբերվող օրինակ:

Առաջին օրինակը 426 համարի տակ պահվում է Ստամբուլի «Նաֆազ Փաշա» գրադարանում, իսկ պատճենները 1135 և 1137 համարների տակ՝ Թեհրանի կենտրոնական գրադարանում և Թեհրանի համալսարանի գիտական կենտրոնում: Այն ունի 489 էջ, ամեն էջում կա 15 տող: Գրված է ընթեռնելի ձեռագրով: Այս օրինակի պատմության շուրջ երկու կարծիք կա: Հաբիբին որպես հիմք ընդունում է 671 թվականը, որն ըստ մեզ առավել ընդունելի է:

Ձեռագրի ուղղագրության հիմնական առանձնահատկություններն են փ, չ, գ տառերի փոխարեն բ, ջ, ժ տառերի ի հայտ գալը և դալ, զալ տառերի կիրառման սկզբունքների պահպանումը: Սրանք բոլորը Հերաթի հին լեզվի օրինաչափություններն են, որոնց մանրամասն բացատրությունները բնօրինակում տրվում են էջերի լուսանցքներում:

Երկրորդ օրինակի բնօրինակ ձեռագիրը 250 համարի տակ պահվում է Ստամբուլի «Նուրօսմանի» գրադարանում, իսկ պատճենները 159 և 161 համարների տակ՝ Թեհրանի կենտրոնական գրադարանում և Թեհրանի համալսարանի գիտական կենտրոնում: Գիրքը գրված է վազիրի ֆորմատով,

էջերի քանակը 552 է: 839թ. ռամազան ամսին սուֆիական մի դերվիշ այս գրվածքին հաղորդել է նասթալիդի ձև: Հերաթի հին լեզվի բազում օրինակներ առկա են այս ծեռագրում:

Երրորդ օրինակը 5776 համարի տակ գտնվում է Կոնիայի «Յուսեֆադա» գրադարանում: Թվագրվում է 862 թվականի մոհարամ ամսով, հեղինակն է Աբդուլազիզ Յահյա բին Սոհամադ Սիավաշին: Ձեռագիրն ընթեռնելի, գրված է նասիտվ: Սխալների առումով այս օրինակն իրավամբ կարելի է համարել ամենաանսխալը: Հերաթի հին լեզվի առանձնահատկություններն այս օրինակում շատ լավ են պահպանված: Ի տարբերություն մյուս օրինակների այս ծեռագրում դրանք ամենից շատն են հանդիպում: Այս փաստը, ըստ երևոյթին կարելի է բացատրել այն պարզ հանգամանքով, որ ծեռագրի հեղինակը եղել է ինքը՝ Հերաթի կառավարիչը: Ձեռագիրը բաղկացած է 135 էջից՝ 13X 21 ֆորմատով, ամեն էջում 23 տող: Ձուտ ծեռագրի առումով այն համարյա նույնացվում է առաջին օրինակի հետ: «Թաբադաթ ալ Սուֆիեի» այս օրինակի պատճենը 1692, 1693 համարների տակ պահվում է Թեհրանի կենտրոնական գրադարանում և Թեհրանի համալսարանի գիտական կենտրոնում:

Չորրորդ օրինակը 235 համարի տակ պահվում է Կալկուտայի Ասիական ընկերության (Asian Society) գրադարանում, իսկ պատճենները 1378 և 1377 համարների տակ՝ Թեհրանի կենտրոնական գրադարանում և Թեհրանի համալսարանի գիտական կենտրոնում: Գրված է վարպետորեն՝ հնդկական նասթալիդով: Ձեռագրի ստեղծման կոնկրետ տարեթիվը հայտնի չէ: Համաձայն մի շարք մասնագետների կարծիքի, այն գրվել է և իր վերջնական տեսքն է ստացել 1015թ. ռամազան ամսին ոմն Աֆգալ բին Համիդ Ղարիշի Ալփանիփաթի կողմից: Հարկ ենք համարում նշել, որ այս ծեռագիրն իր լեզվական ուղղագրությամբ ունի մի առավելություն, բանն այն է, որ այստեղ մեծ կիրառում են գտել այն ժամանակ խոսվող լեզվում հայտնված մի շարք նոր արտահայտություններ, որ բնականաբար ավելի արժեքավոր է դարձնում «Թաբադաթ ալ-Սուֆիեի» այս տարբերակը: Բացի այդ, այս օրինակում, բերված են Աբուլհասան խարազանիի հետ Անսարիի ունեցած հանդիպումների բազմաթիվ նկարագրություններ: Կալկուտայում պահվող այս ծեռագրում օգտագործված լեզուն աչքի է ընկնում իր թեթևությամբ և պարզությամբ, որով

մեծապես պայմանավորվում է «Թաքաղաթ ալ-Սուֆիեի» մատչելիությունը լայն հասարակության համար: Բաղկացած է 21 տող ունեցող 296 էջից:

Եվ վերջապես, հիմնգրողը օրինակը 851 համարի տակ պահվում է Թեհրանում՝ Ֆինանսների և Տնտեսության նախարարության պետական շինությունների կառավարման գրասենյակի գրադարանում⁴: Գրված է մասթալիղով: Վերնագրերը գրված են խրուկաներկով⁵, սակայն դրանք տեղ-տեղ լավ չեն պահպանվել և ջնջված են, այդ իսկ պատճառով վերնագրերի հատվածը ձեռագրում հաճախ դատարկ է մնացել: Ձեռագիրն ունի 286 էջ՝ 107 X 17 ֆորմատով: Յուրաքանչյուր էջը փեղկված է ոսկեգույն և բաց կապույտ աղյուսակներով և բաղկացած է 19 տողից: Այս օրինակը չունի ոչ գրման տարբերիվ, ոչ էլ գրիչի անուն: Ձեռագրագետների ուսումնասիրության արդյունքում առաջացել է մի կարծիք, ըստ որի կիրառված ձեռագիրը համապատասխանում է 9-րդ դարի գրին: Գրքի առաջին էջում գրված է 1054 թվականը, այդ թվականին վերոնշյալ ձեռագիրը բերվել է Սպահանի գրադարան:

Բացի «Թաքաղաթ ալ-Սուֆիեի»-ից, Ամսարին գրել է մի շարք այլ կարևոր երկեր, որոնցից մի քանիսի վրա անպայման նպատակահարմար ենք համարում կանգ առնել: Սուֆիզմի տեսությանը նվիրված «Սոնաջաթ» փոքրիկ ժողովածուն շատ սուֆիների հավաստմամբ չի ունեցել իրեն հավասար: «Սոնաջաթ»-ը աղոթագիրք է, որտեղ Ամսարին այնպիսի վարպետության և հոգեցնությանը է դիմում աստծուն, որ կարդացողը չի կարող չնկատել թե ինչպիսի սիրով է նա լցված Ամենագործի նկատմամբ: Տխրությամբ և ինչ-որ տեղ նաև կարոտով համեմված աղոթքները գրված են հանգավորված արձակով, երբեմն էլ տեքստն ընդհատվում է գեղեցիկ բանաստեղծություններով: Այս ստեղծագործությունը յուրահատուկ մի ուղեցույց է բոլոր նրանց համար, ովքեր ունեն մեծակ մնալու և աստծո հետ հաղորդակցվելու կարիք:

«Սոնաջաթ»-ին շատ նման մի ստեղծագործությունն ունի նաև նույն Դերաթում ուղղակի 400 տարի հետո ապրած ուշ սուֆիզմի ամենակարկառուն ներկայացուցիչներից մեկը՝ Զամին: Նրա «Լավայեի»-ում զգացվում է հեղինակի ինտելեկտուալ-ռացիոնալիստական մոտեցումը աստվածային ճշմարտությանը, սակայն, ոչ հուզականությամբ և ոչ պարզությամբ այն չի համեմատվի Ամսարիի աղոթագրքի հետ: Ամսարին հեղինակն է նաև «Մանագիլ աս-Սաիրին»⁶ ստեղծագործության: Այս երկի լեզուն ևս աչքի է ընկնում նկարագրա-

կան իր հարստությամբ: «Մանագիլ...»-ը գրվել է արծակով և հանդիսանում է փիլիսոփայական գաղափարների ամսպառ աղբյուր: Փիլիսոփայական այդ դրույթներից հետո հաճախ հայտնվում են լեզենդներ և ժողովրդական պատմություններ, որոնք վարպետի գրչի տակ կարծես կոչված են էլ ավելի ամրապնդելու մինչ այդ ներկայացված փիլիսոփայությունը:

Ամսարիի մյուս ստեղծագործությունը, որին կուզեինք անդրադառնալ «Նասիհաթ-նամենե վազիր»՝ «Կոչ վեզիրին» ստեղծագործությունը: Նախ նշենք, որ թԱ նման «Կոչ վեզիրին» ստեղծագործության տեքստը ևս շատ անկանոն է: Մեծ դժվարություն է առաջացնում որոշել նրա առաջին խմբագրման տեսքը: Այս ստեղծագործության դեպքում նույնպես առկա են մի շարք ձեռագրեր, որոնց միացյալ մանրամասն ուսումնասիրությունը միայն թույլ կտա ստեղծման կոնկրետ ժամանակաշրջանի և բնօրինակ տեսքի մասին հետևություններ անել: Այդ ձեռագրերը ևս մեզ են հասել բազմաթիվ տպիչների ձեռքով անցնելուց հետո: Կոչի հեղինակի հարցը նույնպես հարյուր տոկոսով հստակ չէ: Օրինակ ժուկովսկին վստահ նշում է⁷, որ հեղինակը Ամսարին, իսկ Իվանովը հերթյան տեքստերի իր կատալոգում որոշակի կասկածանքով է վերաբերվում այդ համոզմանը: Սակայն, հարկ է նշել, որ մենք ևս հակված ենք այն մտքին, որ հենց Ամսարին է եղել «Կոչ վեզիրին»-ի հեղինակը: Բանն այն է, որ կա այդ ստեղծագործության ութ օրինակ, որոնցից յուրաքանչյուրում նշվում է Ամսարիի անունը: Բացի այդ Կոչ...ի ոճը, կարճ արտահայտությունները շատ հաճախ համեմատած Ամսարիի մյուս երկերի, մասնավորապես ԹԱ-ի Մոռաջաթների հատվածի հետ ունեն զգալի ընդհանրություններ: Այս պարագայում ևս զգացվում է Ամսարիի լեզվի պարզությունը և ժողովրդականությունը, որից կարելի է հետևել, որ երկի հեղինակը պետք է օժտված լինի վիթխարի գրական փորձով, որպեսզի նման վարպետությամբ կարողանա իմաստալից մտքերն արտահայտել սեղմ նախադասություններով՝ զերծ մնալով բարդացումներից և երկիմաստությունից: Հաջորդ հարցը, որ գրավում է մեր ուշադրությունը, վեզիրի իսկությունն է: Ավանդաբար, համարվում է, որ խոսքը գնում է Նազիմ-ուլ-Մուլլեի մասին, որի ժամանակիցն է եղել Ամսարին: Ընդհանրապես, սուֆիական լեզենդները վկայում են այդ երկու մեծ մարդկանց⁸ միջև գոյություն ունեցող ինչ-որ հարաբերությունների մասին, այդ մասին է գրում նաև Ամսարիի ուսուցիչ Խարաղանին իր «Նուր ալ-ուլում» երկի մեջ: Այդ երկի Ամսարիին

վերաբերող հատվածն իր աշխատության մեջ ներկայացնում է Բերտելսը: Ըստ այդ պատմության, երբ Անսարիին կապած տանում էին Բալխ, նա ճանապարհին ուզում էր հասկանալ որ մեղքի համար են իրեն բռնել: Նա հիշում էր, որ ժամանակին անգգուշաբար կանգնել էր շեյխ Աբու-լ-Յասսան Խարաղանիի աղոթքի գորգին և դրա համար ներողություն չէր խնդրել, սակայն հետո խնդրել էր: Անսարին պատկերացնում էր, որ Բալխի շենքերի կտուրներից հիմա մարդիկ քարերը պատրաստ սպասում են իրեն, սակայն երբ մոտեցան Բալխին, ինչ-որ մեկը եկավ և ազատեց նրան: Ասում են Նիզամ-ուլ-Մուլքը մի երազ էր տեսել, որտեղ Խոջա Յասսանը եկել է և հայտնել, որ Անսարին ներողություն էր խնդրել, ապա Նիզամից խնդրել է իրեն հանձնել պոետին:

Այդ հատվածն իհարկե ունի լեգենդային որոշ երանգներ, սակայն դրա հիմքում ինչ-որ պատմական փաստեր ամեն դեպքում կան ընկած: Նախ այն, որ կոչի սկզբում նշվում է Նիզամ-ուլ-Մուլքի անունը, ենթադրում է նման մարդու իշխանությունում լինելու փաստը: Բացի այդ Անսարին խորհուրդներ է տալիս Նիզամի ենթականերին, որը փաստում է այն, որ Նիզամը կառավարել է: Բացի այդ, հարկ է նշել, որ «Կոչը...» խոսում է զուտ աշխարհիկ գործունեության մասին՝ հարստություն կուտակել, տոկոսով փող տալ և այլն: Այն փաստորեն նախանշված է եղել, ոչ թե մուրիդ-սուֆիների, այլ բավականին բարձր դիրք ունեցող աշխարհիկ մարդու համար: Իհարկե, այստեղ Անսարին աշխարհիկ մարդու առջև չի դնում այն պարտադիր պահանջները, որ կղներ մուրիդի համար, սակայն դա յուրահատուկ մի «նվազագույն ծրագիր» էր: Ինչ վերաբերում է սուֆիական օրենքներին, դրանց մասին մեզ շատ քիչ հավաստի տեղեկություններ են հասել: Կարևորագույն փաստաթղթերից է Աբու Սայիդ իբն Աբու-լ-խեյրի «Ասրար աթ-թուհիդ»՝ մենության գաղտնիքները, սուֆիական օրենսդրությունը: Եթե համեմատենք Անսարիի «Կոչը» Աբու-լ-խեյրի օրենսդրության հետ, կտեսնենք, թե ինչպիսի անսովոր ճկունությամբ է օժտված սուֆիների ուսմունքը: Անսարիի ամեն մի խորհուրդ կարելի է զուգահեռ անցկացնել մուրիդին ուղղվող փիրերի խրատների հետ: Սակայն, այստեղ մենք տեսնում ենք միայն նախնական փուլին վերաբերող խորհուրդներ, որոնց մեջ խորանալն, իհարկե, կհանգեցներ սուֆիական որևէ կանգառին: Իր «Կոչ...»-ում Անսարին խիստ բացասաբար է արտահայտվում արտաքինապես սուրբ ձևացողներին, նա Նիզամին խորհուրդ է տալիս, ոչ ոքի ցույց չտալ իր

կարիքները, քանզի դրանք պետք է իմանա միայն կարիքավորը: Անսարիի այս ստեղծագործության մեջ հաճախ կարելի է հանդիպել այնպիսի արտահայտություններ, որոնք սովորական ընթերցողը անպայման կվերգրի Ղուրանին, մասնավորապես՝ «Որտեղ, որ լինես, իմացիր, որ Աստված ներկա է...» արտահայտությունը այս կամ այ կերպ բազմաթիվ անգամներ ներկայացված է Ղուրանում, սակայն եթե այն ըմբռնենք, դրանից առաջ կամ հետո «Կոչ...»-ում տրվող այլ խորհուրդների համատեքստում, պարզ է դառնում, որ այս պարագայում խոսքը հստակ գնում է Մուրաքաբի՝ այսինքն յուրահատուկ մի ենթակայության (подотчетность) մասին: Մեկ այլ օրինակ. «Ժամանակը ընդունիր, որպես մեծ բարիք...», սա «Ժամանակի» սովորական ընկալմամբ չպետք է հասկանալ, այստեղ խոսքը գնում է սուֆիական վաղդ-ի մասին, այն անսահման վայրկյանի մասին, երբ կատարվում է հեռացում ներկա դարձած անցյալից և ապագայից, երբ անհատական կամքը դառնում է տիեզերական:

Բերտեսլը Անսարիի «Կոչ վեզիրին» ստեղծագործությունը որակում է, որպես ծուղակ սուֆիներին լավ վերաբերվող աշխարհիկ մարդկանց համար: Այն ցույց է տալիս, թե ինչ միջոցների էր դիմում շեյխը՝ ազդեցիկ մարդկանց իր կողմը թեքելու համար: Եվ, լինելով ծավալով շատ փոքր, Անսարիի այս ստեղծագործությունը մեծ արժեք է ներկայացնում, ինչպես 11-րդ դարի իրանական/սուֆիական գրականությունը հասկանալու, այնպես էլ զուտ Անսարիի կերպարն ու նշանակությունը զգալու պարագայում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ «Թաբաղաթ» բառը թարգմանաբար նշանակում է վարքանկար:

² Հիշելով բերվող տարեթիվը մեր կողմից ընդունված տարեգրությանը փոխակերպելու համար հարկ է ավելացնել 621, եթե խոսքը մինչև մարտի 21-ն է, և 622՝ մարտի 21-ից հետո:

³ Խանեգահը սուֆիական դերվիշների կացարան մենաստանն է:

⁴ Այս նախարարության անվանումը վերաբերում է նախկին իշխանությունների ժամանակաշրջանին:

⁵ Խրուկաներկը (кхнговаръ) կարմիր գույն ունեցող ներկ է՝ շատ նման հայտնի որդան կարմիրին:

⁶ Այս գիրքը Անսարին գրել է արաբերենով, սակայն Բերտեսլը գտնում է, որ Անսարին նույն Մանազիլը գրել է նաև պարսկերենով:

⁷ "Песни герацкого старца", Жуковский В. А.

⁸ Անսարիի և Նազիմ-ուլ-Մուլքի մասին: